

No. 53773*

**Estonia
and
Armenia**

Agreement between the Government of the Republic of Estonia and the Government of the Republic of Armenia in the fields of education and research. Tallinn, 22 September 2014

Entry into force: *27 May 2015 by notification, in accordance with article 8*

Authentic texts: *Armenian, English and Estonian*

Registration with the Secretariat of the United Nations: *Estonia, 27 July 2016*

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

**Estonie
et
Arménie**

Accord entre le Gouvernement de la République d'Estonie et le Gouvernement de la République d'Arménie dans les domaines de l'éducation et de la recherche. Tallinn, 22 septembre 2014

Entrée en vigueur : *27 mai 2015 par notification, conformément à l'article 8*

Textes authentiques : *arménien, anglais et estonien*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Estonie, 27 juillet 2016*

**Le numéro de volume RTNU n'a pas encore été établi pour ce dossier. Les textes reproduits ci-dessous, s'ils sont disponibles, sont les textes authentiques de l'accord/pièce jointe d'action tel que soumises pour l'enregistrement et publication au Secrétariat. Pour référence, ils ont été présentés sous forme de la pagination consécutive. Les traductions, s'ils sont inclus, ne sont pas en form finale et sont fournies uniquement à titre d'information.*

Համաձայնագիր

**Էստոնիայի Հանրապետության կառավարության և
Հայաստանի Հանրապետության կառավարության միջև
կրթության և հետազոտության բնագավառում համագործակցության
մասին**

Էստոնիայի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի
Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ «Կողմեր»),

Ելնելով իրենց պետություններին միջև ամկա
հարաբերություններին հետագա զարգացման և ամրապնդման
անհրաժեշտությունից,

Նպատակ ունենալով զարգացնել և խորացնել
համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են իրականացնել
համագործակցություն կրթության և հետազոտության բնագավառում
սույն Համաձայնագրի, իրենց պետություններին ազգային
օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի համաձայն:

Հոդված 2

Կողմերն իրենց միջև կրթության և գիտության բնագավառում
համագործակցության հիմնական ձևն են համարում իրենց
ընդհանուր կրթության, մասնագիտական կրթության և
վերապատրաստման, բարձրագույն կրթության, չափահասների
կրթության, երիտասարդական կազմակերպություններին և
գիտահետազոտական հաստատություններին միջև փոխադարձ
կարիքների և հետաքրքրություններին հիման վրա ուղիղ
համագործակցությունը:

Հոդված 3

Կողմերը խրախուսում են դասավանդող և գիտական ծնակազմերի, ուսուցիչների, ուսանողների և աշակերտների համար փոխանակման ծրագրերի իրականացումը՝ միմյանց գիտահետազոտական և կրթական հաստատությունների կրթության և հետազոտության բնագավառում ունեցած փորձին և ձեռքբերումներին ծանոթանալու նպատակով:

Փոխանակման ծրագրերի ստույգ ժամկետները և պայմանները կհամաձայնեցվեն Կողմերի շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների միջև:

Հոդված 4

Կողմերը կխրախուսեն համատեղ գիտահետազոտական ծրագրերի և նախագծերի մշակումը և իրականացումը՝ իրենց համապատասխան հաստատությունների գիտական համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու նպատակով:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն միմյանց պետությունների լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և դասավանդմանը իրենց կրթական հաստատությունում և հնարավորությունների սահմաններում կաջակցեն մասնագետների, մեթոդական ձեռնարկների և դասագրքերի փոխանակմանը:

Հոդված 6

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կկազմակերպեն պատվիրակությունների փոխանակում՝ իրենց հարաբերություններին ամրապնդման, աշխատանքային փորձի փոխանակման, համագործակցությանն առնչվող հարցերի քննարկման նպատակով, ինչպես նաև կկազմակերպեն խորհրդածրոկներ՝ ուղղված սույն Համաձայնագրի իրականացմանը:

Հոդված 7

Կողմերը կխրախուսեն համագործակցության համապատասխան ծրագրերի մշակումը՝ սույն Համաձայնագրի իրականացման նպատակով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին Կողմերի՝ դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցելու միջոցով: Կերջին գրավոր ծանուցման ամսաթիվը կհամարվի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կլինի հինգ տարի ժամկետով և յուրաքանչյուր անգամ կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Կողմերից մեկն առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին: Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի Համաձայնագրով նախատեսված այն համատեղ աշխատանքների իրականացման վրա, որոնք նախաձեռնվել, բայց չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է *Tallinnas* քաղաքում 22.09.2014-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ էստոներեն, հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված տարածայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:



**Էստոնիայի Հանրապետության
կառավարության կողմից՝**



**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**